

ՇՈՒԽՐ ԽԱՆԴԱՌԱՅԻ ՍՈՒՐԲ ՍԻՈՎՆԻ ՎԱՆՔԸ

« Հայագիտական Հասկ », տարեգիրքին Ա. հատորին մէջ Շուղը բառին ստուգաբանութիւնը տրուած էր: Սաղը ասորական բառ է որ արաբերէնի տառադարձութեամբ եղած է շուղը և կը նշանակէ կիրճ, բացուածք, անցք եւայլն:

Իսկահան Կիլիկիոյ սահմաններուն մէջ մենք ունինք երեք Շուղըներ: Առաջինը Կապանի նշանաւոր Շուղըի վանքը, երկրորդը Փոնուզէն դէպի Ճանճի բերդը տանող ճամբուն վրայ գտնուող Շուղըի կիրճը, իսկ երրորդը Չէյթունի մէջ, միջնաբերդին ստորոտը Շուղը ձորը: Իսկ Կիլիկիայէն դուրս ունինք երկու Շուղըներ եւս, որոնց առաջինը Շուղը Պէհեանի Աշտի ճամբուն վրայ, իսկ երկրորդն է Կիւրինի գետակին ափը որ նոյնպէս Շուղը կը կոչուի:

Երուսաղէմի, թիւ 1924¹ զրչագրին յիշատակարանին մէջ յիշատակուած «Շուխր Խաղաթա վանքը» Չէյթունի միջնաբերդին ստորոտը գտնուող Շուղըն է:

Այս Շուղըին, որ ըսել է կիրճին վրայ կամարակալ կամուրջ մը շինուած է որ տեղացիներու կողմէ կանտառոյ կը կոչուի:

Կանտառոյ, կամար և կամ աւելի շատակը կամուրջ ըսել է: Հաճնցիները բոլոր իրենց քաղաքի մօտիկ կամուրջներուն կանտառոյ անունը կու տան, նոյնպէս և Չէյթունցիները:

Որով Չէյթունի Շուղըը միեւնոյն ատեն «Շուղը կանտառոյ» կ'անուանուի տեղացիներու կողմէ:

Սոյն յիշատակարանը նոր գլուխ մը կը բանայ Չէյթունի պատմութեան մէջ:

Մինչեւ ցարդ անորոշ կը մնային Ուլնիա ու Չէյթուն անուններուն փոխարարբերութիւնները: Ընդհանուրին կողմէ ընդունուածը այն է թէ Չէյթուն և Ուլնիա

միեւնոյն տեղոյն անուններն են: Ուլնիա աւելի հին, իսկ Չէյթուն Ուլնիայէն յետոյ կիլիկեան թագաւորութեան ժամանակին տրուած անուն մըն է:

Ըստ Ալիշանի, որ ամենէն շխտակն է, Ուլնիա կը գտնուի Փոնուզի հիւսիսային արեւելեան կողմը, ուր Ստեփանոս Ուլնեցիի նահատակութեան վայրն է և վանքի մը աւերակն ալ կը գտնուի: Ուրեմն, Ուլնիան Շուղը Խանդառայէն հինգ ժամ հարաւ-արեւմուտը կը գտնուի:

Յիշատակարանին թուականը ԾԺԳ (= 1064) է, որ ըսել է ԺԱ. դարուն մենք Չէյթուն անունով տեղ մը ունեցած չենք: Եթէ Չէյթուն անունով տեղ մը ունենայինք այն ատեն Շուղը Խանդառա վանքը պիտի կոչուէր Սրբ. Սիովի Շուխր Խանդառայ վանք ի Չէյթուն, քանի որ Շուղըը ճիշտ Չէյթունի մէջն է:

Շուղը Խանդառայի գետակը կ'երկարի մինչեւ Ուլնիոյ մօտերը, ուր Փոնուզի ջուրերուն հետ միանալով կը թափի Ջիհան գետը:

Շուղը Խանդառայի ձորէն ժամ մը հեռաւորութեան վրայ կը գտնուի Անիձոր կոչուած տափարակ գետինը, ուր տեղ տեղ փլատակուած շէնքերու աւերակոյտեր կան. թերեւս, ատեն մը այս տեղերը Անիէն գաղթած հայերու բնակավայրը եղած է:

Չէյթունի միջնաբերդը անպայման որ Կիլիկեան իշխանութեան կը վերաբերէր, բայց կ'երեւի կորսուած անուան մը տակ. իսկ Կիլիկեան իշխանութեան կործանումէն յետոյ, իբր անառիկ ու անմատչելի տեղ, փոխստական հայեր հոն բնակութիւն հաստատած են, և ԺԸ. դարուն Չէյթուն անունը առած է իր վրայ:

Հետեւաբար կրնանք հզորակցեն թէ ԺԱ. դարուն այժմու Չէյթունը ծանօթ էր միմիայն Շուղը Խանդառա անունով:

չալէպ

ՏԻՔԹ. Յ. ՏԵՐ ԳԱՋԱՐԵԱՆ

1. Տես «Յիշատակարանը ձեռագրաց» էջ 245-6, Գարեգին կաթողիկոս (տպ. Անթիլիաս, 1951).

ԺԵ. ԴԱՐԻ ՄԻ ՆՈՐ ԶԵՌԱԳԻՐ ԱԻԵՏԱՐԱՆ

Ռշտունեաց երկրի հայաբնակ Շատրւան գիւղում դրւած եւ նկարագրուած ձեռագիր էջերը տանում են ձեզ ԺԵ դարի կէսը: Դա թուրքմէն աղ-կոյունիւնների տիրապետութեան շրջանն է, երբ Հայաստանն ամբողջութեամբ, թէեւ կարճ ժամանակով, ընկնում է Ռուսոն Հասանի ընդարձակ պետութեան ծանր լծի տակ: Այնուձեռով պետութեան ծանր լծի տակ: Այնուհետեւ՝ Ծահ-Աբրաս մեծ դաղթի ժամանակ, հայ դիւղացիները ձեռագիրը Հայաստանից տանում են Իրան եւ մօտ երեք ու տանից տանում են Իրան եւ մօտ երեք ու կէս-դար, ամբողջ երեք հարիւր քառասուն երկար տարիներ, առանձին դուրգուրանքով պահում են Սպահան նահանգի նախ-Գեաիլա գաւառի Բաշարդի գիւղում, յետոյ Բուրւարի(1) գաւառի Անաւ, Ջանթուր և Գուլչ հայաբնակ գիւղերում: 1840 թու իսկ Գուլչ հայաբնակ գիւղերում Աբրաս-թուականին ձեռագիրը կը գտնուէր Աբրաս-րիկ գիւղում՝ Յակոբ քահանայի մօտ: Դրանից յետոյ Աւետարանը Տ. Գրիգոր Հախվերդեանի սեփականութիւնն է դառնում: Նրա որդին՝ Արշամ Տէր-Գրիգորեանը, 1946 թւին, Բուրւարի գաւառի Գուլչ գիւղից փոխադրւում է թէհրան և հաստատուում Հէլմէդիէ թաղամասում, ուր մինչեւ օրս էլ պահւում է ձեռագիրը, որ ներկայացնում է հետեւեալ պատկերը. Մեծուքիւնը՝ 27x18 1/2 սմ., կազմը՝ տախտակի վրայ մուգ կարմիր թաւապատ, նիւթը՝ բամբակի թուղթ, մագապատ, նիւթը՝ բամբակի թուղթ, մագապատ, նիւթը՝ սկիզբը երկու դաքեայ պահպանակ՝ սկիզբում եւ վերջում թերթ, համգամակը՝ սկիզբում եւ վերջում թերթ են պահասում, քերթերը՝ 308 (էջ 616), գրութիւնը՝ երկախն, գիրը՝ սեւ թանձր թանաքով մեծ բոլորգիր, տողերը

23, զարդագրութիւնը՝ լուսանցքների որոշ էջերում զարդանկարներ, թռչնազարդեր, զարդեր (մարդկային գլխով կամ եկեղեցու դմբէթով), ծառազարդեր, սկզբնատառերը՝ շատ պարզ եւ կարմիր թանաքով, կիւսախորաններ՝ տարբեր էջերը զարդարում են 13 հատ, որոնցից նկարչական ուրոյն արժէք են ներկայացնում 22-րդ (եղծւած), 187-րդ (եղծւած, 307-րդ (երեքն էլ լուսանցազարդով) եւ 488-րդ (ձախ կողմը եղծւած) երեսներում վրձինւած զարդախորանները: Դրանք իրենց պարզ, բայց այնքան ներդաշնակ եւ ինքնուրոյն ոճաւորումներով եւ կապոյտ, կանաչ, կարմիր եւ այլ երանդների նուրբ զծագրութեամբ ո'չ միայն նկարչական արւեստի զեղեցիկ ստեղծագործութիւններ են, այլ և ԺԵ դարում Ռշտունեաց երկրում զարդացած մանրանկարչական արւեստի մասին ձեղցատուն գաղափար են տալիս: Միւս կիւսախորանները զեղարւեստական տեսակէտից ատանձին արժէք չեն ներկայացնում. խորաններ՝ մի հատ, 187-րդ էջում, նուրբ եւ զունագեղ, որը, զժբախտաբար, եղծւած է:

Պատկերներ՝ Մատթէոս (էջ 21), Մարկոս (էջ 186), Ղուկաս (էջ 306, զրիչը ձեռքին դրում է. դոյները՝ կարմիր, մուգ կապոյտ, դեղին եւ կանաչ) եւ Յովհաննէս (էջ 487) աւետարանիչները, որոնք, սակայն, միջակ վրձինի արտադրութիւններ են:

Նկարներ՝ ունեն դուս կրօնական բնոյթ եւ մեծ մասամբ պատկերում են Յիսուսի կեանքի տարբեր դրւագիծերը՝ Յիսուսի մկրտութիւնը, Յիսուս եւ առաքեալները, Յիսուսի մուտքը Երուսաղէմ, Ոտնւան, Յիսուսի թաղումը, Համբարձումը, Հրեշտակի աւետումը, Մարիամ Աստուածածի-

(1) Բուրւարի գաւառի զեղեցիկութիւնը կազմում են բարձր սարերը եւ մաքուր ու հիասքանչ օդը:

նը եւ առաքեալները եւ ուրիշներ, որոնք նկարեաձ են թոյլ վրձինով:

Գրչուքեան վայրը՝ Ռչտունեաց երկրի Շատուան դիւղը:

Ժամանակը՝ ԶԸ (908+551=1459):

Յիշատակարանը

Աւրհնութիւն (կարմիր թանաքով, ապա սեւ մանր բոլորագիր), զոհութիւն, բարեբանութիւն, զթածին, ողորմածին եւ մարդասիրին աստուծոյ հաւր, աստուծոյ որդւոյ, աստուծոյ հոգւոյն սրբոյ: Եռանձնեայ, եղակի, համազոյ, համակամ, միաշար, անորիշ, անբաժանելի, անքակ, եւ անքանակ, միասնական սր. երրորդութեան, աժմ եւ անզրբաւ յաւիտենիւ, ամէն:

Որոյ շնորհօք աւ (կարմիր թանաքով գրեաձ, ապա՝ սեւ) արտեցաւ, եռահրաշ եւ հոգիազարդ աւետարանս, որ է շաղկապեալ աւետարանչացն, ըստ բաղմերանդ գունոց ի մի ոստայն անկելով հանձար: Չոր արեւստաւորեալ անուշոցաց ծաղկանց եւզեփեցական կազմութեամբ որ ըստ հոգւոյն յատկութեան նմանի, զանազան որակութեամբ, զազափարելով ըստ յոքունց արփիացելոցն զաստակցութեանց առ ի յարմարումն եկեղեցոյ յաւելի խաղաղութեան զլիտոյն պատշաճեալ: Չի յայտանէ կատարելութիւն: Չորս աւետարանք, ի բազում պատճառէ: Չորեքկերպեան կենդանիք: Մարդ: Առեւծ: Եղն: Արծիւ: Չորս նիւթք աշխարհիս՝ հող եւ ջուր. օդ եւ հուր. թշնամիք անհաշտելիք. եւ սիրելիք, անքակտելիք: Չորս զիրք անուան, ամենասուրբ երրորդութեան, հայր որդի հոգի: Չորս զետք բղխեալ ի դրախտէն. փրստն, Գեհոն, Տիգրիս եւ Եփրատէս: Չորս անգիւն եւ չորս եղջիւրք սեղանոյ: Չորս զէմք սրբոյ խաչին: Չորս առաքինութիւնք հոգւոյ՝ արիւթիւն, ողջախոհութիւն, սրբութիւն եւ արդարութիւն: Չորս ծաղք տիեզերոց՝ Արեւելք եւ Արեւմուտք, Հիւ-

սիս եւ Հարաւ: Չորս բանք աւետարանիս՝ պատգամ եւ պատւիրան, սպառնալիս եւ աւետիս: Չորս բանիւ խաւսի աւետարանս՝ հրամանաւ եւ խրատու, աւրինակաւ եւ վկայութեամբ: Եւ այլ բազում պատճառք են, յորս զազափարին չորեքեան աւետարանս: Որոյ ցանկացող եղեալ սուրբ աւետարանիս բարեպաշտ եւ աստուածասէր տանուտէրն Մկրտիչ, որ միշտ եւ հանապաղ բորբոքէր ի սէր սուրբ եւ ի տիեզերաքարոզ քառավտակ սուրբ աւետարանացս եւ ըստ քնաւոր բարուց բարւոյն, ախորժական կամօք եւ մեծաւ տենչմամբ, ստացաւ զսուրբ աւետարանս ի հալալ վաստակոց իւրոց անջնջելի արձան ի մխիթարութիւն հոգւոյ իւրոյ եւ ի յոյս փրկութեան: Եւ ես յոգնամեղս եւ փրճունս ի զբչաց, սոսկ անուն քահանայ Մեղքեսէթ տեսի եւ զփառիպ եւ զսէր սորա զոր ունէր առ հոգեւորան. եւ ըստ իմում կարի յանձն առեալ կատարեցի զսուրբ աւետարանս զայս. ի թրւականութեան հայկազան տումարիս ի յինն հարիւր եւ ի յութն (1908+551 = 1459) յերկիրս ընդշտօնեաց ի գեօղս որ կոչի Շատուան, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածին եւ սրբոյն Ստեփաննոսի նախավկային եւ Գէորգեայ զօրավարին եւ սուրբ Ոսկեանց քահանայիցն, որ աստ կան կառուցեալ: Արդ յերես անկեալ աղաչեմ զձեզ ո՛վ մանկունք սուրբ եկեղեցոյ, յիշեցէք ի Քրիստոս զստացող սուրբ աւետարանիս եւ Աստուած ողորմի ասացէք Մըկրտչին եւ ծնողաց նորին, հաւրն Յոհաննիսին եւ մաւրն Ծնօհարին եւ եղբօրն Թումային եւ կողակցին իւրոյ Ջանմէլէքին եւ որդոյն իւրոց Գօրգի Մէլէքին եւ մեծ պապուն Աստուածատրուն եւ քեռեացն Ատոմին, Կերակոսին եւ Վարդանին եւ ո (ամենայն) արեան մերձաւորացն Աստուած ողորմի ասացէք. ամէն:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս ծնողան Ջանմէլէքին, զԳուլամիրն եւ Վսիպարն եւ զԵղբայրքն զԲախշայիչն եւ զԱշայիչն եւ

զղուստը Ջանմէլէքին, զՇաղիփաչն եւ զփեսայն զՅովհաննէսն եւ զորդիսն իւրոց զԲարդուղիմոս զՍողեղ զԹոմայ զԲուրստակէս, զԳուլամիր, զՆազարէկ, զՄարիմէլէք եւ Թանուելս եւ զայրն զՄարոյն զՎարդ Մանուկ եւ զորդիքն իւրոց զԲարսեղ, զՅակոբ, զՍալիֆայ եւ զԳուլիֆայ, զՓոստեցեալքն ի Քրիստոս եւ զԵրաբոյս զՓոստեցեալքն զՆերսէս եւ զՄուրատ: Ընդ աղայքն իւրոց զՄեղքեսէթ անարժան քանոսին եւ զիս զՄեղքեսէթ անարժան քահանայ (յ) զբող սորա եւ զծնօղն իմ զՍտեփանն եւ զՍողեղն եւ զԳօհար եւ զԵղբայրն իմ եւ զքորն սարկաւազն եւ զքոյրքն իմ զԳուլամիր եւ զՆուրիմայ եւ զտղայքն իմ զսիւրուն զԳօրգ եւ զՍալիֆայ եւ զուտարեան մերձաւորան իմ յիշեցէք ի Քրիստոս եւ Աստուած ողորմի ասացէք. աղաչեմ զձեզ: Դարձեալ կրկին աղաչեմ զամենեանս սիրովն Քրիստոս Աստուած ողորմի ասացէք ստացողի սուրբ աւետարանիս աստ-

ւածասէր եւ բարեմիտ տանուտրոջն Մըկրտչին եւ ծնողաց նորին Յոհաննիսին եւ Ծնօհարին եւ եղբօրն Թոմային, եւ կողակցին Ջանմէլէքին եւ որդոյն իւրոց Գօրգի Մէլէքին եւ մեծ պապուն Աստուածատրուն եւ որդոցն նորա Ատոմին, Աւետիսին, Ըրնոյ (ւ) նոյ (*) Փարն եւ զկողակիցն Աւետիսին, զՍալիֆայն... (պակասում է):

* * *

1946 թւին զաւանդելից Թէհրան հաստատեաձ հայ զիւղացիների մօտ կան այլ ձեռագրեր, որոնցից մի երկուսը նկարչական արեւստի տեսակէտից ուրոյն արժէք են ներկայացնում: Այդ զբչագրերի արեւստի կանդրադատանք մի նոր ուսումնասիրութեամբ:

Թէհրան

Ա.Ր.Ա.Մ ԵՐԵՄԵԱՆ

(*) Յիշատակարանի ուղղագրութիւնը հարազատութեամբ պահպանել ենք:

ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՅ ԼՈՒՍԻՆԵԱՆՆԵՐ

Համոյքով կը հրատարակենք ողբ. քազմովաստակ հ. վարդաթ Վ. Հացունիի սոյն պատմական ուսումնասիրութեամ յօդուածաշարքը, որ այժմէական է և ամշուշտ իր կարեւոր նպաստը կը բերէ: Գեոաւոր ու մօտաւոր անցեալին մէջ երեւցած կամ կարծեցեալ Ղուսինեաններուն պատմութեան լուսաբանութեան Պարտք կը համարենք ըսել թէ թեթիւ հպումներ ըրած ենք միայն լեզուական տեսակետով.

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Անցեալ զարուն ունեցանք այս անունով պարծեցող քանի մը տուններ, որ մեր ազգային պատմութեան մէջ տեղ չունէին եւ ջանացին տանիլ խառնել հոն իրենց ծագումը: Եթէ իրենց այդ ճիւղերը չեն արդարա-

նար քննադատութեան ատեանին առջեւ, սակայն այդ տուններէն ոմանք տունն անձեր որ ապրեցան ու գործեցին իրրեւ հայ, եւ նոյնիսկ շքեղաբար: Եւ եթէ անցեալին մէջ ոչ՝ բայց ապագային պիտի գրաւեն իրենց տեղը պատմութեան մէջ, եւ թերեւս